State of California—Health and Human Services Agency
California Department of Public Health

MARK B HORTON, MD, MSPH
Director

ARNOLD SCHWARZENEGGER
Governor

ՄԻԱՎ-ի Ստուգումը Առողջապահական Խնամքի Միջավայրում

Այսօր, ձեր առողջապահական խնամքի այցի պահին, ձեզ բուժսպասարկողը թերևս ցանկանա ՄԻԱՎ-ի ստուգում կատարել: Հետևյալները պատասխաններն են հարցերի, որ շատ հաճախ մարդիկ ունենում են ՄԻԱՎ-ի ստուգման մասին՝

Ի՞նչ է ՄԻԱՎ-ը

Մարդկային Իմունանբավարարության Վիրուսը (HIV) առաջացնում է մի հիվանդություն, որը տկարացնում է իմուն կամ դիմադրողական համակարգը, դժվարացնելով մարմնի պայքարը վարակների դեմ:

ՄԻԱՎ-ը ինչպե՞ս է փոխանցվում

ՄԻԱՎ-ը տարածվում է որոշակի մարմնական հեղուկների փոխանակման միջոցով, առավելաբար չպաշտպանված սեռական հարաբերությամբ կամ ՄԻԱՎ-ով վարակված անձի օգտագործած նույն ասեղը օգտագործելուվ:

Ի՞նչ է ՄԻԱՎ-ի ստուգումը

ՄԻԱՎ-ի ստուգումը որոշում է, որ ձեր մարմինը արտադրու՞մ է ՄԻԱՎ-ի հակամարմիններ: Եթե ՄԻԱՎ-ի հակամարմիններ ունեք, ուրեմն դուք վարակվել եք ՄԻԱՎ-ով: Կան և՛ սովորական և՛ արագ ՄԻԱՎ-ի ստուգումներ, որոնք օգտագործում են արյունը, ավշահյութը կամ լորձունքը՝ հակամարմինները ստուգելու համար:

Ի՞նչ կպատահի եթե ինձ մոտ ՄԻԱՎ հայտնաբերվի

Եթե ձեզ մոտ ՄԻԱՎ հայտնաբերվի, թերևս ցանկանաք ձեզ բժշկական խնամք մատակարարողի հետ քննարկել բուժման ընտրանքները: ՄԻԱՎ ունեցող մարդկանց համար կան ՄԻԱՎ-ի բուժման զանազան ընտրանքներ:

Ի՞նչ կպատահի եթե ինձ մոտ ՄԻԱՎ չհայտնաբերվի

Պաշտպանեք ինքներդ ձեզ այնպես, ինչպես նկարագրված է ներքևը: Եթե չպաշտպանված սեռական հարաբերություն ունենաք կամ որևէ պատճառով ուրիշի հետ օգտագործեք նույն ասեղը, ամեն տարի պետք է ենթարկվեք ՄԻԱՎ-ի ստուգման:

Կարող եք ինքներդ ձեզ և ուրիշների պաշտպանել ՄԻԱՎ-ի դեմ՝

- Օգտագործելով լատեքսից/պոլիուրեթանից պահպանակ (տղամարդու կամ կանացի) սեռական հարաբերություն ունենալիս: (Օգտագործեք միայն ջրային հիմքով քսանյութեր: Յուղային հիմքով քսանյութերը նվազեցնում են պահպանակների արդյունավետությունը:)
- Սրսկվող դեղերի, ստերոիդների, վիտամինների, տատու դրոշմելու կամ մարմինը ծակելու համար ուրիշի օգտագործած ասեղները չօգտագործելով:

Օգնության այլ աղբյուրներ՝

Զանգահարեք Կալիֆորնիայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի Հրատապ գծին (800) 367-2437 (AIDS) համարով՝ ՄԻԱՎ-ի հղումների և ձեր շրջանում խորհրդատվական աղբյուրների համար, կամ այցելեք

ՄԻԱՎ-ի Գրասենյակի կայքէջը
Office of AIDS Web site.